ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 7 *Общественные науки*

Ղ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ. «ՉԵՐՆԻՇԵՎՍԿՈՒ ԵՎ ԴՈԲՐՈԼՅՈՒԲՈՎԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ»[1]

Հայ միտքը (առավելապես Ռուսահայաստանում) մի դարից ավելի է, ինչ գտնվում է ռուս մեծ ժողովրդի մտավոր առաջադիմական շարժման հետ սերտ կապերի մեջ և միշտ էլ բարերար ազդեցություն է կրել նրանից։

Այդ կապերը զուտ տեսական բնույթ չեն կրել, այլ և տեղի է ունեցել անձնական շփում՝ հաստատեղ գործունեության ձևով։

Ռուս-հայկական կապերը ավելի սերտ դարձան սովետական շրջանում։

Չնայած այդ հանգամանքին, մինչև այժմ էլ փիլիսոփայությամբ զբաղվող մեր ընկերները չեն տվել քիչ թե շատ կարևոր մի ինքնուրույն աշխատություն ռուսական փիլիսոփայության մասին։

Հասկանալի է, որ մեր հայ երիտասարդությունը անհրաժեշտ չափով չկարողանալով օգտվել ռուսերենից, կարիք է զգում ռուսական մտքի մասին մայրենի լեզվով գրված աշխատություններից։

Ահա հենց այդ պակասն է, որ մասամբ լրացնում է ընկ. Ղազար Վարդապետյանի հրապարակած «Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի փիլիսոփայական հայացքները» աշխատությունը։

Հեղինակը տալով հատկապես Չերնիշևսկու փիլիսոփայական հայացքների ծավալուն վերլուծություն, միաժամանակ նպատակ է դրել ցույց տալ այն նորը և առանձնահատուկը, որ ունի ռուսական փիլիսոփայությունը բուրժուական փիլիսոփայության, առանձնապես գերմանական և նրա պատկը կազմող Հեգելի իդեալիստական փիլիսոփայության նկատմամբ։

Հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ ռուս առաջադեմ փիլիսոփայությունը չպատանեշավորվելով արևմուտքից, սովորելով նրանից, չի մնացել աշակերտողի դերում, որ նա հակադրվել է գերմանական ճահճային ֆիլիստերական փիլիսոփայությանը, մերժել է իդեալիզմը, հակառակ գերմանական փիլիսոփայության պասսիվ վերացական բնույթին (այդ թվում նաև Ֆոյերբախի հայեցողական մատերիալիզմը)՝ փիլիսոփայությունը դարձրել է ակտիվ սկզբունք, կյանքը փոխելու հասարակության դեմոկրատական վերակառուցման պրակտիկ զենք։ Անհրաժեշտ է նշել, որ երկար ժամանակ այն կարծիքն է տարածված եղել, թե ռուսական մտածողները եղել են արևմուտքի աշակերտները և միմիայն աշակերտները։ Ճավալի է, բայց փաստ է, որ Պլեխանովը ոչ միայն առիթ է տվել այդ հայացքին, այլ և ֆորմուլայի է վերածել այն։ Նա գրում է. «Ռուսական դրականությունը, ընդհանրապես ասած, արևմտյան դրականությանը միշտ էլ վերաբերվել է ինչպես աշակերտը ուսուցչին»։[2]

Ընկ. Ղ. Վարդապետյանը վկայակոչելով մարքսիզմի կլասիկների դիտողությունները, հատկապես Լենինի բազմաթիվ ցուցումները, ինչպես և վերջին տարիների ռուս մասնագետների հետազոտությունները, լիովին բացահայ-

[1] Երևան, 1946 թ. էջ 109.

[2] Գ. Վ. Պլեխանով, Երկերի ժողովածու, հատ. I, էջ 409.

տում է այս կարծիքի անանկությունը։ Լենինը 1922 թվին „Под знаменем марксизма" ժուռնալի համար գրած «Մարանչող մատերիալիզմի նշանակության մասին» ծրագրային հոդվածում ասում է. «Ռուսաստանի առաջավոր հասարակական մտքի գլխավոր ուղղությունները, բարեբախտաբար, լուրջ մատերիալիստական արագիցիա ունեն։ Խոսելով գեն Գ. Վ. Պլեխանովի մասին, բավական է անվանել Չերնիշևսկուն, որից մամանակակից նարոդնիկները (ժողովրդական սոցիալիստները, էսերները և այլն) ետ էին նահանջում, հաճախ ընկնելով մոդայական ռեակցիոն փիլիսոփայական ուսմունքների հեռեից, ենթարկվելով եվրոպական գիտության իրբև թե «վերջին խոսքի» արտաքին խարուսիկ փայլին և չկարողանալով այդ խարուսիկ փայլի ներքո երեան հանել բուրժուազիային, նրա նախապաշարմունքներին և բուրժուական հեռադիմականությանն սպասարկելու այս կամ այն տարբերակը»։[1]

Լենինյան այս գնահատականը հանդիսանում է ռուսական առաջավոր մտքի հանրագումար-եզրակացությունը։ Հենց այդ պատճառով էլ լենինյան այդ ցուցումը պետք է մարմնավորվի ռուսական առաջավոր փիլիսոփայության վերաբերյալ ամեն մի հետազոտության մեջ.

Չերնիշևսկին և Դուբրոլյուբովը իրենց ստեղծագործություններով և գործունեությամբ վերը նշված լենինյան գնահատականի վառ իլյուստրացիան են.

Հեղինակը անմիջականորեն անցնելով Չերնիշևսկու հայացքների բնութագրմանը, ցույց է տալիս, որ Չերնիշևսկին հաջաբնակորեն, ազնվաբար հանդես է եկել «մարդկային ոգու օգուտ» և առաջընթացը կասեցնող արագիցիայի դեմ։ Նրա ըմբռնում ոգին առնականացել է առաջին հերթին ռուսական ցարական միապետության մահաղուն տիրապետության, այդ տիրապետությունը արդարացնող բոլոր տեսակի ճորտական և լիբերալ կեղծ թեորիաների դեմ մղվող պայքարում։ Ասելությունը այլանգակ իրականության նկատմամբ հասցրել է նրան ամեն տեսակի դարը կորցրած «սրբություններ» դեմ պայքարելուն, ստիպել է նրա խորտակիչ ոգին։

Չերնիշևսկու նմաններին հակառակորդները անվանեցին նիհիլիստներ։ Դա մի սուր պիտակ էր՝ նետված նրանց լուսապայծառ ճակատին։ Չերնիշևսկին քողազերծ էր անում՝ լիբերալ բուրժուազիայի գունազարդ պատմուճանը, ցույց էր տալիս, որ լիբերալիզմը գործարքի է գիմում ցարիզմի հետ՝ պատառներ փախցնելով նրանից, վախենալով և վախեցնելով ժողովրդական ռեոլուցիայի պոռթկումով։ Հեղինակը գրում է. «Գորկու խոսքերով ասած, Չերնիշևսկին և նրա հետևորդները որոշակի կամենում էին փող կյանքի ճահճի վրայով կամուրջ անցկացնել դեպի որոշ բարության ապագա թագավորությունը»։ Չերնիշևսկու պայքարի կովանը դեմոկրատական, գյուղացիական ռեոլուցիան էր, ցարիզմի խորտակումը։ 1861 թվին լիբերալների գովաբանած «մեծ ռեֆորմը» Չերնիշևսկին անվանում է գարշելիություն, իսկ լիբերալներին՝ Լենինի արտահայտությամբ՝ մաքուր պլոկողներ։ Չերնիշևսկին իր բոլոր մտավոր կարողությունները, գիտելիքները, հին կարգերը փոխելու մեծ գործը առաջ մղելու վրա գործադրեց։ Գիտությունը նրա

[1] Լենին. «Մարքս, Էնգելս, մարքսիզմ», մոս., Երևան, 1933 թ., էջ 232—233։

համար «պարապ վախի խազալիք» չէր, այլ ակտիվ սկզբունք՝ կյանքը վերափոխելու համար։ Նա անհաշտ պարտիական էր և՝ փիլիսոփայության մեջ և կյանքում։ Ամեն ինչ ձեռք է բերվում պայքարով, կրքի լարումով։ Չերնիշևսկին սիրով կստորագրեր Դյութեի խոսքերի տակ, թէ՝

Կյանքի, ապրելու լոկ նա է արժան,
Ով պայքարով է
Նվաճում նրանս։

Ընկ. Ղ. Վարդապետյանը մանրամասնորեն, գիտական ամբողջ բարեխղճությամբ քննում է սասայական թեորիայի փիլիսոփայական արմատները, հատկապես Հեգելի փիլիսոփայության մեջ, ցույց է տալիս, որ Չերնիշևսկին քողազերծ է անում, մերկացնում է ռասայաբանության հակահումանիստական վայրենաբարո թեորիան։ Չերնիշևսկին բոլոր նման թեորիաների առաջ գալը բացատրում է նյութական մոտիվներով։

Հեղինակը ցույց է տալիս, որ գերմանական ֆաշիստական ռասայական «թեորիան» եղել է գերմանական մտածողության բաղկացուցիչ մասը։ Չերնիշևսկին գնահատելով Հեգելի իրական մեծությունը, չի ներում նրան, երբ նա հայտարարում է, թե «քաղաքացիական հասարակությունը իրեն սեսնում է գաղութներ հիմնելու հարկադրված։ Արդեն միայն աղքատության աճը ինքնին նրա վրա ազդում է այդ ուղղությամբ, բայց հատկապես նշանակություն ունի այն հանգամանքը, որ բնակչության մի մասը չի կարող աշխատանքով բավարարել իր պահանջմունքները, եթե արտադրությունը գերազանցում է սպառման կարիքը» (էջ 16)։

Այստեղից մի քանի քայլ էր մնում մինչև այն եզրակացությունը, թե պետք է ոչնչացնել, ստրկացնել ժողովուրդներին, «կենսական տարածություն նվաճել»։ Դրանից հետո հասկանալի է, ըստ գերմանացու՝ մարդկանց ոչնչացնելը անմեղ բան է։ Դա հերյուրանք է մարդկային առողջ բանականության հասցեին, դա չորուկ է բանականության փարթամ ծառի վրա, որի ոչնչացման համար մարտնչում էր Չերնիշևսկին։ Չերնիշևսկին գերմանական սնապարծությունը բացատրում է նրանով, որ գերմանական փիլիսոփայությունը գերմանացուն համարում է բացարձակ ոգու կրողը, մարմնացումը։ Չերնիշևսկին այդ «փիլիսոփայական լուծի» դեմ մարտնչում է մատերիալիզմի դիրքերից, գիտության ընձեռած ողջ զենք ու զրահով։

Ընկ. Ղազար Վարդապետյանը այնուհետև քննում է մտածողության և կեցության հարաբերության խնդիրը, որը հանդիսանում է փիլիսոփայության հարցերի հարցը։ Ծավալով էլ այդ հարցի քննությանն ամենից շատ տեղ է հատկացված։ Հեղինակը հավաստում է փիլիսոփայության հիմնական հարցում Չերնիշևսկու հետևողական մատերիալիստ լինելը։ «Չերնիշևսկին միակ իրոք մեծ ռուս գրողն է, որ կարողացել է 50-ական թվականներից մինչև 88 թիվը մնալ ամբողջական փիլիսոփայական մատերիալիզմի մակարդակի վրա և մի կողմ նետել նեոկանտականների, պոզիտիվիստների, մախիստների և այլ խառնտշփոթիչների ողորմելի անհեթեթությունը։[1]

[1] Լենին, Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ, հայերեն, 1933 թ., էջ 114։

Հեգինակը նկատում է, որ Չերնիշևսկին հետևելով Ֆոյերբախին, իրեն համարելով նրա աշակերտը, իրականում շատ առաջ անցավ նրանից։ Չերնիշևսկին, մերժեց նրա հայեցողականությունը և ոչ միայն այդ։ Չերնիշևսկին, հակասակ Ֆոյերբախի, դեն չնետեց Հեգելի դիալեկտիկան, ոչ էլ այն ընդունեց պասսիվորեն։ Նա մերժեց Հեգելի դիալեկտիկական շարժման իդեալիստական միստիկական կողմը, քննադատեց Հեգելի սիստեմը։ Չերնիշևսկին, բացահայտում է Հեգելի պրինցիպների լայնությունը և եզրակացությունների նեղությունը, անձկությունը, ցույց է տալիս Հեգելի պահպանողականությունը քաղաքական հարցերում։ Հեգելը քարոզում էր ճշմարտության որոնում, բազմակողմանի հետազոտություն, տվյալի առաջ կանգ չառնելու, այն բացասելու ձգտում։ Ահա այդ էլ խորը ազդեցություն թողեց Չերնիշևսկու վրա։ Անցյալ դարի 30-ական թվականներին այդ պահանջը ճորտական, կալվածատիրական փտած կարգերի պայմաններում առաջ բերեց ռեալուցիոն ակտիվ ցարիզմի, ճորտատերերի իշխանությունը տապալելու համար։

Կար ժամանակ, որ Հեգելին ընդունում էին անվերապահորեն և հանուն հեգելականության ոգեորվում էին Հեգելից ավելի։ Բայց Չերնիշևսկին, այդ խորաթափանց միտքը, չէր կարող չնկատել հեգելյան իդեալիստական փիլիսոփայության արատավոր լինելը։ Չերնիշևսկին գրում է. «... Հեգելի ամեն մի բառը հանդիսանում էր անկասկած ճշմարտություն, մեծ ուսուցչի ամեն մի արտահայտությունը նրա աշակերտների կողմից ընդունվում էր բառացի իմաստով, երբ այդ ճշմարտությունների ստուգման համար ոչ հոգս էր տարվում, ոչ էլ նախազգացում կար, թե Հեգելն անհետևողական է, որ ամեն մի ֆայլոսոֆին իրեն հակասում է, որ ընդունելով նրա պրինցիպները, հետևողական մտածողը հանգում է այնպիսի եզրակացությունների, որոնք բոլորովին տարբեր են նրա կողմից առաջադրված եզրակացություններից»։

Հեգելի իդեալիստական փիլիսոփայությունն, իր դիալեկտիկայով հանդերձ, անպետք էր իրականությունը փոխելու համար։ Հենց այդ կողմի վրա էլ ուշադրություն դարձրին ռուս մտածողները, հենց այդ տեսակետից էլ քննադատեցին Հեգելին, նրանից առաջ անցնելով։ «Այժմ մենք կհասնենք այն ամենին, ինչին հասել է Հեգելը, սակայն կհասնենք ավելի հրատակ և լրիվ ձևով, քան ինքը Հեգելը» -գրում է Չերնիշևսկին։

Չերնիշևսկին ցույց է տալիս Հեգելի պահպանողականությունը, հակառակ հենց իր դիալեկտիկայի արտաքանությանը (անվերջ զարգացում), որ Հեգելի մոտ չկա այս առանձնահատուկը, որով նա ջոկվեր մյուս մտածողներից, որ Հեգելը իրերի ավյալ վիճակի ստրուկն է։

Չերնիշևսկին մերկացնում է գերմանական թեորիասիրությունը հանուն թեորիասիրության։ Ընկ. Ղ. Վարդապետյանը, ապացուցելու համար, թե ինչպես էր ըմբռնում Չերնիշևսկին պատմական զարգացման պատճառը, վերցնում է հետևյալ բնորոշ օրինակը։ «Թե ինչու մի ժողովուրդ արագ է զարգանում, իսկ մյուսը կարծեք թե սառած մնում է իր տեղում (Չերնիշևսկին օրինակ է բերում Չինաստանը), հեգելյան փիլիսոփայությունը չի կարողանում բացատրել։ Իդեալիստական փիլիսոփայությունը վերջիվերջո «բացատրում» է չինացու օրգանիզմի կառուցվածքով, նրա ռասայական հատկություններով։ Չերնիշևսկին ծաղրում է այդ թեորիան և գտնում է, որ

պետք է այդ բացատրել տեղի և ժամանակի պարագաներով։ «Այն առանձնահատկությունները, որոնց մենք հանդիպում ենք չինացիների մոտ, նրանց առանձնահատկությունները չեն, այլ տվյալ պատմական վիճակի հասարակական կրության մեջ գտնվող մարդկանց ընդհանուր առանձնահատկություններ»։ Չերնիշևսկին ցանկանում է ասել, որ հասարակական միևնույն պայմանները, եթե կություն ունենային անգլիացիների մոտ, անգլիացիք էլ նույն չինացիների վիճակում կլինեին։ Այդ ընդհանուր ճիշտ մոտեցումը պատմության բացատրման խնդրում դունաթափ է դառնում, երբ Չերնիշևսկին զարդացման պատճառը երևույթից դուրս է փընտրում։ Չինաստանի ստատիկ վիճակը Չերնիշևսկին բացատրում է արտաքին հանգամանքներով— ներխուժումներով, ասպատակություններով, կործանարար պատերազմներով։ «Չինաստանի պատմությունը ոչ թե անշարժություն է,—ասում է Չերնիշևսկին,—այլ բարբարոսների ասպատակություններ, նվաճումների, ճնշման հետևանքով առաջացած քաղաքակրթության մի շարք անկումներ»։

Ակնհայտ է, որ Չերնիշևսկին չի կարողանում բացահայտել հասարակական զարդացման հատուկ ներքին առաջմղիչ ուժերի փոխհարաբերությունները, հասարակության զարգացումը չի ըմբռնում որպես դասակարգային ներքին հակադրությունների պայքարի հետևանք, այլ ուռճացնում է արտաքին մոմենտի նշանակությունը (որ չի ժխտվում, բայց վճռական չէ), այն հասցնելով բացարձակ հիմունքի։ Այդ բոլորով հանդերձ, նա դուրկ չէ պատմական հոտառությունից, նա պատմության մեջ բացասում է ճակատագրական, նախորոշված, սահուն, հարթ զարդացումը։ Նա բնության, հասարակության բոլոր բաղմազանությունների մեջ տեսնում է միասնական մատերիական հիմք։ Չերնիշևսկին մատերիալիստ լինելով՝ անհաշտ է միստիֆիկացիայի նկատմամբ։ Թեև Չերնիշևսկին շատ բանով մերձենում է դիալեկտիկական մատերիալիզմին, բայց չի կարողանում կանգնել դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերի վրա։

Լենինը բացատրում է բանի էությունը. «բայց Չերնիշևսկին չի կարողացել, ավելի ճիշտ՝ չէր կարող, ռուսական կյանքի հետամնացության պատճառով, բարձրանալ մինչև Մարքսի և Էնգելսի դիալեկտիկական մատերիալիզմը»[1]։ Հեղինակը այնուհետև Մարքսից արած բնորոշ ցիտումներով քննադատում է Հեգելի սիստեմը, ցույց է տալիս, որ, ըստ Հեգելի, Գրուսական պետությունը հաշտեցնում է դասերին, որ «գրուսական յունկերական պետությունը նույնպես աբսոլուտ իդեայի արտահայտությունն է։ Չերնիշևսկին, մերժելով ամեն մի հաշտեցում, վստահ դիալեկտիկական տրամաբանությանը, կործանման է ենթարկում այն ամենը, «ինչն ապրել է իր դարը», և հանդիսատ ասում է՝ «թող լինի այն, ինչ պետք է լինի. իսկ վերջիվերջո մեր փողոցում էլ տոն կլինի»։ Չերնիշևսկին ի հակադրություն Հեգելի, գտնում է, որ «այն, ինչ արտապրում է մարդկային բանականությունը (որը աբսոլուտ իդեայի, բացարձակ ոգու ձևով է հանդես գալիս Հեգելի մոտ։ Ա. Բ.), տրված է փորձով», որ մարդը հասկացողությունները ստանում է դրսից, մտքի դիալեկտիկան մատերիալ աշխարհի դիալեկտիկայի արտացոլումն է։

Սակայն մատերիալիստական դիալեկտիկայի այդ բացարձակ սկզբունքը Չերնիշևսկու մոտ երևան է գալիս որպես մոմենտ։ Նա կարևոր նշանա-

[1] Լենին «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ», Երևան, 1933 թ., էջ 414։

կություն է տալիս ձևի և բովանդակության պայքարին, պայքարը հասկանալով արտաքին ուժերի բախումների ձևով, որպես հակասություն պրոգրեսիվ և ռեգրեսիվ ուժերի, բանականության և նախապաշարմունքների առաջադեմ և հետադեմ ուժերի պայքար։ Նա չհասավ մարքսիստական դիալեկտիկային, չհասկացավ, որ «իսկական իմաստով՝ դիալեկտիկան առարկաների բուն էությանն մեջ եղած հակասությունների ուսումնասիրումն է», որ «զարգացումը հակադրությունների» պայքար է» (Լենին)։

Ընկեր Ղազար Վարդապետյանը այնուհետև քննության է առնում Չերնիշևսկու գնոսեոլոգիական հայացքները. «Արդյոք մեր մտածողությունը ի վիճակի՝ է ճանաչելու իրական աշխարհը». այս հարցին Չերնիշևսկին տալիս է որոշակի ե դրական պատասխան։ Այս հարցում նա հակադրվում է թե օբեկտիվ իդեալիզմին, թե սուբեկտիվ իդեալիզմին, որոնք վերջիվերջո նույն կետին են հանգում—միտքը ճանաչում է միտքը, բացասելով օբեկտիվ ռեալ իրականության գոյությունը, իրական աշխարհը հայտարարելով մերթ բացարձակ ոգու (= աբսոլուտի հասցրած մարդկային մաքի, միստիկական դուրս տված մարդկային բանականության) հայտարկման (օբեկտիվ իդեալիզմ, Հեգել և այլն), մերթ մեր զգայությունների կոմպլեքսի(սուբեկտիվ իդեալիզմ Բերկլի, Մախ և այլն), մերթ էլ, պարզապես չժխտելով հանդերձ իրականության գոյությունը, կասկածով հրաժարվում են աշխարհը ճանաչելու հնարավորությունից (Կանտ)։

Իդեալիզմի վերհիշված բոլոր տարատեսակությունները գերագնահատելով՝ մարդկային բանականությունը իրականում ստորացնում է նրան, զրկելով իրականությունը, արտաքին աշխարհը ճանաչելու կարողությունից։ Դրանով իսկ նրանց ի չիք են դարձնում իմացաբանությունը։ Այդ բոլորի նպատակը մեզնից անկախ օբեկտիվ, ռեալ աշխարհի գոյությունը ժխտելու մեջ է։

Այդ հարցում Չերնիշևսկին կանգնած է «ամբողջական փիլիսոփայական մատերիալիզմի մակարդակի վրա» (Լենին)։ Չերնիշևսկին կանտականությունը, ագնոստիցիզմը քննադատում է «ձախից», հետևողական մատերիալիզմի դիրքերից, դրա համար է հենց Լենինը այնքան բարձր գնահատական տալիս Չերնիշևսկուն։ Չերնիշևսկին քննադատում է բնագետներին, որոնք իրենց ենթակայում են համայնապարփակ թեորիաներ կառուցողներ, իսկ իրոք դրանց մեծամասնությունը «կրկնում է Կանտի մետաֆիզիկական թեորիան մեր դիտելիության սուբեկտիվության մասին»։ Նա քննադատում է այն բնագետներին, որոնք սահմանաղատվում են փիլիսոփայական մտքի եղրակացություններից, անգիտակցորեն ընկնելով սխալ ու դատապարտված փիլիսոփայական սիստեմների ազդեցության տակ։ Լենինը գրում է. «...Չերնիշևսկու, ինչպես և ամեն մի մատերիալիստի համար, առարկաները, այսինքն՝ Գանտի մանվածապատ լեզվով ասած՝ «ինքնին իրերն» իրոք գոյություն ունեն և միանգամայն իմանալի են մեզ համար, իմանալի են և իրենց գոյությամբ ե իրենց հատկություններով, և՝ իրենց իրական հարաբերություններով...»[1]։

Չերնիշևսկին ծաղրում է ագնոստիկներին և իլյուզիոնիստներ է անվանում նրանց։

Ագնոստիկները գիտության անկատարությունը օգտագործում են իրենց թեորիան արդարացնելու համար։ Դրանով իսկ նրանք օբեկտիվորեն

[1] Լենին—Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ, Երևան 1938 թ., էջ 413։

չեն էլ ձգտում գիտության առաջադիմությանը, որովհետև այդ գիտությունը անհարկ է աշխարհը ճանաչելու համար։ Ահա թե որտեղ է իմացության ուժի թերագնահատումը։

Քանի որ Չերնիշևսկու համար միտքը ճանաչողական ուժ ունի, նա պետք է ծառայի կյանքի փտած կողմերը վերացնելու, կյանքը փոխելու համար. թեորիան պետք է վերածվի պրակտիկայի, իրեն արդարացնի պրակտիկայի մեջ։ Ինչպես Ղազար Վարդապետյանը տեղին է բերում Դյութեի խոսքը. «Բարեկամ, թեորիան գորշ է, մշտադալար է միայն կյանքի ծառը»։ Այո, Չերնիշևսկու համար էլ օտար են դուտ վերացական դատողությունները, նա կյանքի թեորետիկ է։ «Մարդը ինքնին շատ թույլ է, իր ամբողջ ուժը վերցնում է միայն իրական կյանքի իմաստությունից և բնության տարերային ուժերից օգտվելու կարողությունից...» ասում է Չերնիշևսկին։

Չերնիշևսկին կանտյան իդեալիզմին հակադրվում է նաև օրինաչափության խնդրում։ Իդեալիզմի համար չկա օբեկտիվ օրինաչափություն, որովհետև չկա օբեկտիվ աշխարհ։ Լենինը այդ խնդրում ևս Չերնիշևսկուն հակադրելով իդեալիստ մախիստներին, իդեալիզմի այդ վատթարագույն տեսակին, գրում է. «(Ի տեղեկություն խառնաշփոթիչ-մախիստների, Չերնիշևսկու, ինչպես և ամեն մի մատերիալիստի համար, իրականության մեջ կա այն, ինչ որ մեզ ներկայանում է պատճառի և գործողության շղկապ, կա օբեկտիվ պատճառականություն կամ բնության անհրաժեշտություն...)»։[1]

Չերնիշևսկին ջախջախում է ագնոստիկների ևս մի անպտուղ «թեորիան», թե զգայությունից դուրս ոչինչ չկա, զգայությունը չունի իրենից դուրս իր օրեկը, զգայությունը միևնույն ժամանակ իր օրեկն է, սր «զգացումները սոսկ խորհրդանիշներ են, որոնց միջով ուղարկվում են այդ պատկերները (այսինքն՝ զգայության պատկերները։ Ա. Բ.), ի վիճակի չլինելով որևէ անմիջական հարաբերություն հաստատելու խելքի և օբեկտի միջև (Դ. Յում)։

Հեղինակը ցույց է տալիս, որ Չերնիշևսկին կանգ չի առնում աշխարհի ճանաչողության դրական լուծման վրա։ Նա պայքար է ծավալում ռելատիվիզմի դեմ, որը ժխտում է բացարձակ օբեկտիվ ճշմարտությունը, ամեն ինչ վերածելով զուտ հարաբերականության։ Այդ նշանակում է ժխտել ճշմարտության օբեկտիվությունը, այդ նշանակում է ամեն ինչ բխեցնել սուբեկտից։ Ագնոստիկ-ռելատիվիստների այն պնդումը, որ բնության մեջ պատճառական կապ, օբեկտիվ անհրաժեշտություն չկա, չկա պատճառի և հետևանքի հարաբերություն, պատճառի և հետևանքի դադափարը ստանում ենք փորձի (=զգայության) և սովորության միջոցով. միջոցները նպատակին ժոտեցնում ենք նույնպես սովորության միջոցով և այլն, և այլն,— Չերնիշևսկու կողմից ամենասուր քննադատության է հանդիպում։ Չերնիշևսկին հարցնում է. «իսկ ինչպես է մարդը կողմնորոշվում իր պրակտիկայում բնության երևույթների ուսումնասիրության ժամանակ, ինչպես է նախատեսում գալիքը, կատարվող երևույթի հետևանքները. որտեղից են մարդիկ այժմ ձեռք բերել բնության ճանաչողության ներկա մակարդակը, չէ՞ որ վայրենին շատ քիչ բան դիտեր բնության երևույթների կապերի

[1] Լենին—Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ, Երևան, 1933 թ., 413։

մասին. պատճառականի ըմբռնումը նրա մոտ շատ ծանծաղ էր, մակերեսային։ Եթե ճշմարտությունը հարաբերական է, կապված է սուբեկտիվ զգայությունների փորձի, սովորության հետ, ապա ինչպես է, որ յուրաքանչյուր անգամ նոր սերունդը չի սկսում վայրենությունից։ Ճիշտ է, որ բնության երևույթները մի նվագում չեն կարող լրիվ ըմբռնվել։ Եթե այդ տեղի ունենար, այն ժամանակ այլևս իմացության, բանականության մասին չէինք էլ խոսի, որովհետև նրան ոչինչ չէր մնա անելու։ Ճիշտ է, մեր ճանաչողությունը հարաբերական է, բայց նա ունի իր մեջ բացարձակ ճշմարտություն. գա մեր սուբեկտից անկախ. մեր գիտակցությունից անկախ գոյություն ունեցող իրականության օբեկտիվ գոյության արտացոլումն է մեր մտածողության մեջ։ Դա էլ հենց մտածողության բովանդակությունն է կազմում։ Չերնիշևսկու համար բնությունը, պատմությունը և դրանց արտացոլումը մտածողությունը երբեք կանգ չի առնում, նա զարգանում է դեպի բարձրը, երևույթների ավելի խորը ճանաչումը, դեպի բացարձակ ճշմարտության սահմանների լայնացումը։

Չերնիշևսկին բնության մեջ տեսնում է կապ, պատճառականություն, օբեկտիվ օրինաչափություն, օբեկտիվ անհրաժեշտություն։ Այն հարցը, թե մտածողության օրենքները համապատասխանում են բնության օրենքներին, Չերնիշևսկին լուծում է մարդկային պրակտիկայի միջոցով։ «Պրակտիկան կեղծիքի և ինքնահրապուրման մեծագույն մերկացնողն է ոչ միայն գործնական, այլև զգայության և մտքի գործերում։

«Ինչ որ թեորիայում ենթակա է վեճի, մաքուր լուծվում է իրական կյանքի պրակտիկայով» (Չերնիշևսկի)։

Վերացական ճշմարտություն չկա, ճշմարտությունը կոնկրետ է լինում, հավաստում է Չերնիշևսկին։ Ամեն ինչ պայմանավորված է տեսի և ժամանակի պարագաներով։ Նա բերում է ակնառու օրինակներ։ Այսպես. անձրևը բարիք է, թե ոչ. չի կարելի ասել։ Երբ գալիս է հացահատիկի ցանքը ավարտվելուց հետո՝ օգտակար է, երբ գալիս է կալսման ժամանակ, վնասակար է։ Այսպես, պատերազմը կարող է լինել կործանարար և բարերար։ 1812 թվականի հայրենական պատերազմը Նապոլեոնի դեմ ռուս ժողովրդի համար փրկարար էր, փրկարար էր նաև պարսիկների դեմ ժղվող Մարաթոնի ճակատամարտը հույների անկախության դործում։ Չերնիշևսկին դիալեկտիկ է հենց բերված օրինակներում ևս։ Երևույթը քննել իր օբեկտիվ-կոնկրետ վիճակում, վեր հանել նրա հատկությունները, կապերը, ցույց տալ առանձինի և ընդհանուրի կապը – ահա Չերնիշևսկու պահանջը, քննության, հետազոտության նրա առաջադրած մեթոդը։

Այդ հզոր միտքը, որ ամեն ինչ պայմանավորում էր տեղի և ժամանակի պարագաներով, ինքն էլ շատ բանում դոհ դնաց ցարական հետադեմ ժանտ իրականությանը։ Նա չկարողացավ հասնել պատմության մատերիալիստական ըմբռնմանը։

Բայց Չերնիշևսկին ընդհանուրի և մասնավորի հարաբերության խնդրում հակվում է դեպի մեխանիստական հայացքը։ Ըստ Չերնիշևսկու մասերի պարզ թվաբանական գումարը հավասար է ամբողջությանը։ Ամբողջի և մասնավորի մեջ որակական տարբերություն չի նկատում։ Նա չի նկատում մասի և ամբողջի, մասնավորի և ընդհանուրի փոխադարձ հակադրությունները և դրանց փոխադարձ ներթափանցումները։ Հասարակության պատ-

ությունն ըմբռնման խնդրում Չերնիշևսկին նույնպես է վարվում։ Հասարակությունը առանձին-առանձին մարդկանց պարզ դումարն է. ինչպիսին առանձին մարդիկ են, այնպես էլ նրանց միադումար հասարակությունն է։ Լենինը շատ կլասիկ ձևով է պատկերել մասնավորի և ընդհանուրի հարաբերության հարցը. «Ուրեմն հակադրությունները (առանձինը հակադիր է ընդհանուրին) նույնական են. առանձինը գոյություն չունի այլ կերպ, քան այն կապակցությամբ, որը տանում է դեպի ընդհանուրը։ Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով։ Ամեն մի առանձինը (այսպես թե այնպես) ընդհանուր է։ Ամեն մի ընդհանուրն առանձինի (մասնիկը կամ կողմը կամ էությունն է)։ Ամեն մի ընդհանուր միայն մոտավորապես է ընդգրկում բոլոր առանձին առարկաները։ Ամեն մի առանձին ընդհանուրի մեջ մտնում է ոչ լիովին և այլն և այլն։ Ամեն մի առանձին հազարավոր փոխանցումներով շաղկապված է այլ սեռի առանձինների (իրերի, երևույթների, պրոցեսների) հետ և այլն»։[1]

Ընկ. Ղազար Վարդապետյանը եղրակացնում է. «պատմության շարժիչ ուժերի նրա (Չերնիշևսկու։ Ա. Բ.) ըմբռնումը հիմնականում իդեալիստական է» (էջ 74)։ Իրոք, Չերնիշևսկին գրում է. «հիմնական ուժը, որը բարձրացնում է մարդկային կեցությունը, մարդկանց մտավոր զարգացումն է»։ Բայց «նրան օտար չեն պատմական մատերիալիզմի շատ ցայտուն օրինակներ» (էջ 74)։ Եվ որպես օրինակ հեղինակը բերում է Բելինսկու վրա Պետերբուրգի արած ազդեցության բացատրությունը Չերնիշևսկու կողմից։ Չերնիշևսկին գտնում է, որ Բելինսկին գնալով Պետերբուրգ, շրջադարձ կատարեց հեգելյան պրինցիպներից։ Դրա պատճառը սոցիալական այն երևույթներն էին, կյանքի այն ընթացքը, որ գոյություն չուներ Պետերբուրգի համեմատությամբ պրովինցիոնալ քաղաք Մոսկվայում։ «Պետերբուրգում իրական կյանքն այնքան աղմկոտ է, այնքան անհանգիստ և կպչուն, որ դժվար թե նրա էության նկատմամբ խաբվես, դժվար թե չտարհամոզվես, որ նա շարժվում է ոչ հեգելյան սիստեմի իդեալական պլանի համաձայն. դժվար է Ճաալ իդեալիստ» գրում է Չերնիշևսկին։

Չերնիշևսկին իսկական հումանիստ է։ Նրա ամբողջ գործունեությունը ունեցել է մարդկանց երջանիկ դարձնելու ձգտում։ Ըստ Չերնիշևսկու Ռուսաստանում մարդկանց երջանիկ դարձնելու, հասարակության վերակառուցման համար ամենալավ ձևը սոցիալիզմն է։

Չերնիշևսկին պայքարում է քաղքենիական էգոիզմի դեմ, որի համար աշխարհում ոչինչ ավելի թանկ չէ, քան իր փորրիկ պարտեզը։ Թող փոքրիկ ճայթի, աշխարհ կործանվի, միայն թե նրա անդորրը չվրդովվի։

Հեղինակը գրքում ցույց տալով, որ Չերնիշևսկին իր ուսուցիչ Ֆոյերբախից շատ բանով առաջ անցավ, ցույց է տալիս նաև այն, որ նա այնուամենայնիվ մնաց Ֆոյերբախի անթրոպոլոգիական պրինցիպի վրա։ Անթրոպոլոգիան մարդուն քննում է ոչ թե նրա հասարակական-քաղաքական գործունեության տեսակետից, այլ որպես բիոլոգիական էակ. նրա էությունը չի համարում հասարակական հարաբերությունների արդյունք, այլ ներվային գործունեության արտահայտություն։

Մարդու մտավոր և բարոյական վիճակը բարելավելու համար Չերնի-

[1] Լենին—Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ. Երևան 1934 էջ 421—422

.եսկին առաջարկում է պայքարել էգոիզմի դեմ, որպես մարդու էության վատթար կոզմի դեմ։ Չերնիշևսկին ասում է. «Ով բացառապես գործում է էգոիստական նկատառումներով, նա գործում է մարդկային բնությանը հակադիր՝ ճնշելով իր մեջ բնածին և անջնջելի պահանջները։ Չերնիշևսկին անձնասիրությունը էգոիզմին հակադրում է իրեն արժանապատվությունը տեսնող և ուրիշներին սիրող բանական էգոիզմը։

Ինչպես Էնգելսը, այնպես էլ Լենինը, լուսաբանելով արժանությունը բարձր են գնահատել Չերնիշևսկուն և Դոբրոլյուբովին, նրանց ստեղծագործությունները համարելով «առնատնման բարձր այն աստիճանից, ինչ որ ստեղծվել է Գերմանիայում և Ֆրանսիայում պաշտոնական պատմական գիտության կոզմից» (Էնգելս)։

Ընկեր Ղազար Վարդապետյանը վերլուծելով Չերնիշևսկու փիլիսոփայական հայացքների բնութագրությունը, անցնում է Դոբրոլյուբովի փիլիսոփայական հայացքների քննությանը։ Դոբրոլյուբովին նվիրված է 30 էջից քիչ ավելի (Չերնիշևսկուն՝ 86 էջ)։ Այդպես են վարվում նաև ռուս մատնագետները, նկատի ունենալով Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի հայացքների ընդհանուր միասնությունը և համատեղ գործունեությունը։ Այդ հանգամանքն ընդգծում է նաև Գ. Վ. Պլեխանովը։

Դոբրոլյուբովն էլ Չերնիշևսկու պես իրեն ուսուցիչ ճանաչել է Ֆոյերբախին, սակայն չի կարելի մոռանալ, որ Դոբրոլյուբովը, ինչպես և ռուս այլ մտածողներ, եվրոպական փիլիսոփայությանը մոտեցել են Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու քննադատության պրիզմայով։ Ինքը Դոբրոլյուբովն էլ խոստովանում է, որ «մեր բոլոր լավագույն իդեալները Բելինսկու մեջ են»։

Դոբրոլյուբովը ամբողջ հոգով ձգտել է պրոգրեսին, ցարական դաժան կարգը փոխելուն, նա մեծագույն հավատով էր լցված դեպի ռուս ժողովրդի ապագան, երբ Ռուսաստանը կթոթափի ծանր շղթաները, նրանում կծագնի ազատ գիտությունը, սերն ու հշմարտությունը, ասում է նա։ Դոբրոլյուբովը տոգորված հայրենասեր էր, նրան խորթ էր օտարատյացությունը. եթե սիրում ես քեզ, չես կարող ատել ուրիշին, ասում է Դոբրոլյուբովը։ «Իսկական հայրենասիրությունը, որպես դեպի մարդկությունը առանձին սիրո արտահայտություն, անհարիր է դեպի առանձին ժողովուրդները եղած Ցնամության հետ» (Դոբրոլյուբով)։

Դոբրոլյուբովի հումանիզմին հակադիր գերմանական ֆաշիստների մարդակերական «թեորիան» հնչում է որպես վայրենաճիչ դիսոնանս։ Նույնիսկ Հեգելն ամոթ չի դգացել փիլիսոփայորեն «հիմնավորելով» օտարատյացությունը։ Նա ասում է. «... Սլավոնական վիթխարի ազգը... բացառվում է մեր տեսությունից նրա համար, որովհետև նա մինչև այժմ հանդես չի եկել որպես ինքնուրույն մոմենտ աշխարհում բանականության հայտարերությունների շարքի մեջ»։

Դոբրոլյուբովը Չերնիշևսկու պես ձգտում էր մարդու երջանկությանը, իսկ Ֆոյերբախի անթրոպոլոգիական փիլիսոփայության (որ դրված է Չերնիշևսկու փիլիսոփայության հիմքում) կենտրոնն էլ կազմում էր մարդը։ Ահա թե ինչու հանախ Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը ձգտելով դուրս գալ Ֆոյերբախյան փիլիսոփայության շրջանակներից, մնում են նրա մեջ։ Անթրոպոլոգիական փիլիսոփայությունը մարդուն դիտում է մատերիալիստական տեսակետից։

Նա մերժում է մարդու մեջ առանձին-առանձին հոգեկան և մատերիական կողմերը տեսնելուց։ Մարդկային բնությունը մի է, հաստատում է անթրոպոլոգիզմը. բայց մարդու զարգացման մեջ հիմնականը համարում է էթիկական կողմը։

Դոբրոլյուբովը մատերիալիստ է և դիալեկտիկ։ Նա ընդունում է վերընթաց զարգացումը և զարգացման բոլոր աստիճանների հիմքում տեսնում է մատերիականը։ Նա շարժումը դիտում է որպես իրի, առարկայի ինքնաշարժում։ Ուժի իդեալիստական միստիկական հասկացողությանը հակադրում է մատերիալիզմը. «Ուժը կազմում է մատերիայի արմատական անկապտելի հատկությունը», գրում է Դոբրոլյուբովը։ Մարդկային ուղեղի ուժը երեան է գալիս զգայությունների ձևով, իսկ ուղեղը մատերիա է, բացատրում է Դոբրոլյուբովը։ Դոբրոլյուբովը հիանալի է բացատրում էության և երևույթի հարաբերության հարցը։ Երևույթը էության ոչ ադեկվատ արատացոլումն է։ Երբեմն երևույթը խորամանկում է, կեղծում է էությունը, իմացության դերը երևույթից, երևույթի միջոցով, էության մեջ խորանալու, էությունը ըմբռնելու մեջ է։ Դոբրոլյուբովը աշխարհն իր բոլոր ձևերով— բնություն, մարդ, ուղեղ, մատերիական միասնության մեջ է տեսնում։ Մտածողությունը արտաքին աշխարհի արտացոլումն է. «Հասկացողությունները,—ասում է Դոբրոլյուբովը,—մարդն իրենից չի զարգացնում, այլ ստանում է արտաքին աշխարհից։ Մթթե ջախջախիչ հարված չէ Կանտի ագնոստիցիզմին, երբ Դոբրոլյուբովը գրում է. «Արտաքին զգացողությունները միշտ չէ, որ մոլորվում են. թեև նրանց հետ պատահում է այդպիսի բան, սակայն ընդհանրապես կարելի է վստահել նրանց»։ Դոբրոլյուբովը օրենքի, օրինաչափության ըմբռնման մեջ էլ մատերիալիստ է։ Նա պայքարել է բուրժուական զանազան խավարամտությունների դեմ աթեիզմի տեսակետից։ Նա պայքարում է կրոն-օպիումի դեմ, որը ձգտում է հնազանդության մեջ պահել ժողովրդական մասսաներին։ Դոբրոլյուբովը լավ է համարում մեռնել ալիքների մեջ, քան շնչահեղձ լինել ճահճում։ Դա շատ համահնչյուն է իսպանական ռևոլուցիոն հերոսուհի Դոլորես Իբարուրիի թեավոր և իմաստալից խոսքի հետ՝ լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք։ Այո, ոչ Դոբրոլյուբովը, ոչ էլ Չերնիշևսկին ծնկի չեկան ցարիզմի առաջ և մինչև «մահու շունչ» պայքարեցին ու գոչեցին. «ազատություն»։

*
*

Հիանալի լեզվով և մատչելի կերպով շարադրված՝ մեր քննության ենթակա գիրքը ունի նաև մի քանի թերություններ։ Թեև հեղինակը շատ է խոսում գերմանական իդեալիստական փիլիսոփայության չերնիշևսկիական քննադատության շուրջը, բայց բաց են թողնված Հեգելի, մանավանդ Կանտի. ինչպես և առհասարակ գերմանական իդեալիստական մտքի մասին նրա շատ կարևոր դատողությունները. օրինակ՝ Հեգելի մոտ մետաֆիզիկորեն կտրվում է ընդհանուրը և կոնկրետը «Հեգելյան սիստեմի համարյա բոլոր մասերում». Հեգելի օբեկտիվիզմը ֆատալիզմ է. նրա էսթետիկայում գեղեցկի իդեան գտնվում է իրականությունից դուրս. իրականությունը լոկ հոգևոր կյանքն է, Կանտի ուսմունքը գուտ անհեթեթություն է և այլն և այլն։

Ցույց չի արված (հարկ եղած չափով), որ Չերնիշևսկին ոչ միայն տեսնում է հեգելյան պրինցիպների և եզրակացությունների հակասությունները, այլև այն, որ Հեգելը ինքն էլ ժշուչապատ էր պատկերացնում. լրիվ

չէր պարզել իր համար իր պրինցիպները, որ նրա մոտ սխոլաստիցիզմ կա։

Հեղինակը բոլորովին չի անդրադարձել ռուսական իդեալիզմի (Յուրկևիչ, Լավրով և այլն) դեմ Չերնիշևսկու մղած պայքարին։ Չէ որ Չերնիշևսկին իր թեկուզ հենց գլխավոր գործը՝ «անթրոպոլոգիական պրինցիպը փիլիսոփայության մեջ» սուր ծայրով ուղղել է Լավրովի դեմ։ Ռուսական առաջավոր մտածողները պայքարել և գոհվել են հենց սեփական երկրի ռեակցիոն ուժերի դեմ մղվող պայքարում։ Այդ մասին է գրում Լենինը «Զախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքում։

Թեև հեղինակը առարկում է Պլեխանովին, որ ռուսները միշտ էլ մնացել են Արևմուտքի աշակերտների դերում, բայց ցույց չի տվել հենց Չերնիշևսկու այն մտքերը, որոնք ուղղված են նման մտայնության դեմ։ Այդ խիստ կարևոր համարելով, մենք ցանկանում ենք այստեղ մեջբերումներ անել Չերնիշևսկուց. «Բայց հասկացողությունների ու մարդկանց միասնությունը մեզ մոտ միայն ամրապնդվել է, և ոչ թե ծնվել (ընդգծումն իմն է։ Ա. Բ.) արտաքին ազդեցություններից։ Այն ժամանակ մեր մտավոր շարժման գլուխ կանգնած գործիչները իհարկե ոգևորվում էին նրանով, որ Եվրոպայի ժամանակակից բոլոր մտածողների համընկնումը իրենց հետ հաստատում է իրենց հասկացողությունների արդարացիությունը, բայց այդ մարդիկ իրենց հասկացողություններով արդեն կախում չունեին ոչ մի կողմնակի հեղինակությունից։ Մեր հայրենիքի մտավոր կյանքը այնպիսի մարդիկ հրապարակ բերեց, որոնք գնում էին Եվրոպայի մտածողների հետ կողք կողքի, և ոչ թե նրանց աշակերտների շքախմբում...»[1]

Չերնիշևսկին Բելինսկու և Գերցենի մասին գրում է. «...Նրանք առաջ գնացին, կանգ չառնելով կես ճանապարհին, ինչպես կանգ առավ Հեգելը»։[2]

Այնուհետև Չերնիշևսկին ուղղակի խոսելով Բելինսկու և նրա գործակիցների մասին, ասում է. «Բելինսկին և նրա գործակիցներից գլխավորագույնները մտավոր տեսակետից դարձան ամբողջապես ինքնուրույն մարդիկ»։[3]

Այդ բոլորից հետո պարզ է, որ ինքը Չերնիշևսկին և իր գործակից Դոբրոլյուբովը գերազանցեցին իրենց նախորդներին և ռուսական միտքը դարձրին ավելի հզոր ու անկախ։

Ընկ. Վարպետյանը խոսելով Ֆոյերբախի և առհասարակ անթրոպոլոգիզմի մասին փիլիսոփայության մեջ, շատ թռուցիկ կերպով է կանգ առնում անթրոպոլոգիզմի բնութագրության վրա, որը և աղոտ է դարձնում այն թերությունների լուսաբանումը, որ կա Չերնիշևսկու մատերիալիստական ուսմունքի մեջ։ Պետք է նկատել, որ Չերնիշևսկու մատերիալիզմը էապես ելնում է Ֆոյերբախից, և նրա մատերիալիզմի թերությունները էլ հենց կապված են Ֆոյերբախի անթրոպոլոգիզմի փիլիսոփայության թերությունների հետ։ Այդ հիանալի կերպով ցույց է տվել Լենինը Ֆոյերբախի «Լեկցիաներ կրոնի էության մասին» գրքի իր կոնսպեկտում։

«Ահա թե ինչու նեղ է Ֆոյերբախի և Չերնիշևսկու «անթրոպոլոգիական պրինցիպը փիլիսոփայության մեջ» տերմինը։ Թե անթրոպոլոգիական

[1] Чернышевский, Избранные философские сочинения. 1938, стр. 471.
[2] Там же, стр. 456.
[3] Там же, стр. 471.

պրինցիպը, թե նատուրալիզմը մատերիալիզմի միայն ազատ, թույլ նկարագրություններն են»։[1]

Ընկ. Վարդապետյանի գիրքը զերծ չէ նաև մի քանի անորոշ և սխալ ձևակերպումներից։ Մի շարք հասկացողություններում ընկ. Վարդապետյանի մոտ Չերնիշևսկու և մարքսիզմի կլասիկների միջև նույնության գիծ է անցկացվում, չի ցույց տրված, որ Չերնիշևսկու մոտ պարտականության, պրակտիկայի, դիալեկտիկայի հասկացողությունները նույնական չեն մարքսիզմի կլասիկների հասկացողության հետ և իրենց հիմքում ունեն անթրոպոլոգիզմի ուսմունքը, որ կան երկու հավերժական պարտիաներ՝ պրոգրեսիվ և ռեգրեսիվ, որոնք հետևանք են մարդկային բնության երկու կողմերի։ Դիալեկտիկան Չերնիշևսկին չի հասկացել այնպես, ինչպես Մարքսը բնորոշում է իր դիալեկտիկան «Կապիտալի» մեջ։ Չերնիշևսկու մոտ պրակտիկայի հասկացողությունն էլ նույնական չէ, հավասար չէ մարքսյան հասկացողությանը, որ նկատի ունի արտադրողական ուժերի զարգացումը արտադրության զարգացման պրոցեսում։ Եթե Չերնիշևսկին դիալեկտիկան հասկանար մարքսիզմի տեսակետից, չէր ասի, թե՝ կարելի է անցնել միջին աստիճանը (=կապիտալիզմը) Ռուսաստանում որպես լոգիկական աստիճան և ուղղակի դիմել դեպի սոցիալիզմը։ Նույն անթրոպոլոգիզմից ելնելով է, որ Չերնիշևսկին մարդու ճանաչողությունը համարում է թույլ և ստիմանափակ և այդ բացատրում է մարդ-բիոլոգիական արարածի օրգանների անզարգացած թույլ լինելու հետևանքով, և ոչ թե մարդկային հասարակական արտադրողական պրակտիկայով ու գործունեությամբ։

Ընկ. Վարդապետյանը գրում է. «Հեգելի ուսմունքը,—ասել է Դիերցենը,—ռևոլուցիայի ալգեբրան է, նկատի ունենալով նրա գիալեկտիկական մեթոդը։ Պետք էր ուղղակի դրել, որ Դիերցենը ռևոլուցիայի հանրահաշիվ համարում էր Հեգելի դիալեկտիկան, և ոչ թե ամբողջ ուսմունքը։ Լենինը հենց այդպես էլ դրում է «Դիերցենի հիշատակին» գործում։ «Նա յուրացրեց Հեգելի դիալեկտիկան, նա հասկացավ, որ այն (դիալեկտիկան, Ա. Բ.՝ իրենից ներկայացնում է ռևոլուցիայի հանրահաշիվը»։[2]

Մեզ թվում է, որ գիրքը զերծ կլիներ նման անորոշություններից, եթե հեղինակը պարզեր Չերնիշևսկու և մարքսիզմի (Մարքսի և Ինգելսի) հարաբերության հարցը։ Ցավոք սրտի նույնիսկ ռուս գրողները խոսելով ռուսական փիլիսոփայության և այդ թվում Չերնիշևսկու փիլիսոփայության մասին, այդ հարցը չեն հարուցում, այնինչ այդ մասին խոսելիս, մենք կարծում ենք, անպայման պետք է նկատի ունենալ Լենինի հետևյալ միտքը. «Քաղաքական գործունեությունը Նեվայի պրոսպեկտի մայթը չէ (Պետերբուրգի միանգամայն ուղիղ գլխավոր փողոցի մաքուր, լայն, հարթ մայթը), հաճախ ասում էր դեռ միևչմարքսյան շրջանի (ընդգծումը իմն է։ Ա. Բ.) ռուսական մեծ սոցիալիստ Չերնիշևսկին»։[3]

Թեև Լենինը այստեղ Չերնիշևսկու միևչմարքսյան շրջանի սոցիա-

[1] Ленин. Философские тетради. 1936, стр. 73.

[2] Ленин, том XV, стр. 464.

[3] Լենին—«Զարթության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ, Երևան, 1938 թ., էջ 78։

լիսա լինելու մասին է խոսում, բայց միանգամայն հիշա կլիներ փիլիսոփայության պատմության մեջ էլ Ճերնիշևսկուն դասել մինչմարքսյան շրջանը, այդ տարածելով նաև (Գերցենից սկսած) մյուս մատերիալիստ ռևոլուցիոն դեմոկրատների վրա։

Գրախոսվող գրքում կան նաև լեզվական թերություններ, որ երբեմն արդյունք են հեղինակի հաճախ չափից ավելի բելետրիստիկական ոճի, որը, մեր կարծիքով, լուրջ փիլիսոփայական աշխատության համար այնքան էլ օգտակար չէ։

Ա. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ